

ՀՀ Արմավիրի մարզպետ Գագիկ Միրիջանյանի շնորհավորական ուղերձը Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

20.06.2018



Ինձ շատ հոգեհարազատ բնագավառի հարգելի գործընկերներ, ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները Բուժաշխատողի օրվա կապակցությամբ: Բժշկի մասնագիտությունն իսկապես եղել է, կա և կշարունակվի որակվել որպես մեծագույն նվիրում պահանջող և մարդասիրական մասնագիտություն: Մասնագիտություն, որն ի գործու է հրաշքներ գործել, ընդհուպ մինչև երկրորդ կյանք պարզևեղ մարդուն:

Ես խոնարհվում եմ բոլոր այն բժիշկների վաստակի առջև, ովքեր, բարձր պահելով մասնագիտական որակավորումը, մեծագույն նվիրումով են իրականացրել և շարունակում են իրականացնել իրենց աստվածահաճո առաքելությունը:

Հավատացած եղեք, որ այն հոգատարությունն ու սերը, որը դրսևորվում է բուժհաստատությունում սպիտակ խալաթ կրող յուրաքանչյուր անձի կողմից, միշտ փոխադարձվում է ամենաանկեղծ ու մարդկային վերաբերմունքով: Եվ ավելի մեծ ու իրական գնահատանք բժշկի համար կարծում եմ գոյություն չունի:

Մակայն բոլորիս է հայտնի, որ բժշկի գործունեությունը չի սահմանափակվում ամենօրյա մասնագիտական առաքելությամբ: Եվ այժմ պետական մակարդակով բավականին լուրջ ծրագրեր են իրականացվում նաև բնակչությանը որակյալ և մատչելի բժշկական ծառայություններով ապահովելու, բուժհաստատություններն արդիականացնելու ուղղությամբ:

Այս բարեփոխումները, զուգորդվելով բժշկի մասնագիտական բարձր որակավորման և մարդկային հատկանիշների հետ, համոզված եմ, որ միայն կնպաստեն ոլորտում իրական հաջողություններ գրանցելուն և առաջընթացին:

Հարգարժան բուժաշխատողներ, թույլ տվեք ևս մեկ անգամ շնորհավորել ձեզ մասնագիտական օրվա առթիվ՝ ցանկանալով ամուր կամք և անձնական երջանկություն: Եվ թող ձեր նվիրական աշխատանքը միշտ հաջողությամբ պսակվի: Ամենայն բարիք ձեզ և ձեր ընտանիքներին: